11-ՐԴ ՆԻՍՏ

29 օգոստոսի, երեկոյան ժամը 8, 1918թ.

Նախագահ *Սահակյանը* բանալով նիստը հայտարարում է, որ կառավարության կողմից պրեզիդիումը ստացել է երկու օրենսգիծ, մեկը՝ խոլերայի, իսկ մյուսը՝ Նոր Բայազետում գանձարան հիմնելու մասին: Համաձայն նակազի, օրենսգիծը հանձնվում է համապատասխան հանձնաժողովներին, որից հետո կատարվում է զինաթափման հարցի երրորդ ընթերցումը:

Օրենսգիծը անցնում է՝ թե՛ հոդված առ հոդված քննարկելիս, և թե՛ ամբողջը միասին:

Պատգամավոր *Մուշեղյանը* նկատում է, որ զինաթափման հարցը լուրջ խնդիրներից մեկն է, և որ նրանց ֆրակցիան ցանկանում էր որոշ ուղղումներով միայն ընդունել օրենսգիծը: Բայց որովհետև այդպես չեղավ, ուստի իրենք հակառակ են ձայն տալիս և նախատեսում են, որ ապագայում այդ խնդիրը աղետալի հետևանքներ կունենա:

Պատգամավոր *Տիգրանյանը* էսէռների այս վերջին նկատողությունը համարում է անտակտ և ավելացնում, որ սոց.-հեղափոխականները ժամանակ ունեին և կարող էին հարկ եղած ուղղումները մտցնել, իսկ այդ դիտողությունները պետք է անեին քվեարկությունից առաջ: Առաջարկում է օրենսգիծը հանձնել խմբագրական կոմիսիային, որտեղ թերևս հնարավոր լինի որոշ ուղղումներ մտցնել:

Նախագահը հայտարարում է այդ խնդրի մասին վիճաբանությունները սպառված և առաջարկում է անցնել օրակարգի երկրորդ կետին՝ ֆինանսական հանձնաժողովի զեկուցմանը՝ պատգամավորների օրապահիկի մասին:

Պատգամավոր *Տեր-Մարտիրոսյանը* նկատում է, որ օրապահիկի մասին կոմիսիայի մշակած օրենսգիծը նախապես ուղարկվել է ֆրակցիաներին, որից հետո հանձնաժողովը որոշ փոփոխություն է մտցրել՝ համաձայն ֆրակցիաների դիտողությունների: Այնուհետև անցնում է օրենսգծի հոդված առ հոդված ընթերցմանը:

Պատգ. *Բուդաղյանը* դաշնակցության ֆրակցիայի կողմից օրենսգծի առաջին հոդվածը փոխում է այս կերպ՝ թե յուրաքանչյուր պատգամավոր ստանում է օրական 30 ռ. սկսած խորհրդի բացման օրից մինչև այս կազմի լիազորությունների վերջը: Այդ առաջարկը չի անցնում:

Այնուհետև *Բուդաղյանը* համաձայն չէ, որ նախագահի օգնականներն ու քարտուղարները օրապահիկից ավել ստանան. միայն օրապահիկից դուրս առաջարկում է խորհրդի նախագահին տալ ամսական 700 ռ.: Առաջարկը անցնում է:

Պատգ. *Բուդաղյանը* նկատում է, որ խորհրդի անդամը պետք է ազատ լինի պետական և վճարովի հասարակական պաշտոններից, որովհետև նա ժամանակ չի ունենա կոմիսիաներում աշխատելու:

Պատգ. *Մելիքյանը* նկատում է, որ ոչ մի հիմունք չկա, որ խորհրդի անդամը մի այլ տեղ պաշտոն ունենա, շնորհիվ մեր իրականությանը, որ պակաս ինտելիգենտ ուժեր ունի: Նման հարցերի ժամանակ պետք է կամ պաշտոնից հեռանա, կամ խորհրդից: Երկրորդ, եթե մեկը ունի խորհրդից դուրս այլ պաշտոն ամսական 500 ռ., նա պետք է դրանից հրաժարվի, ապա մեր մեջ կան այնպիսիները, որոնք ամսական 5000 ռ. են ստանում, այդ դեպքում պետք է ազատ պրոֆեսիայով պարապողների համար էլ որոշում լինի:

Պատգամավոր *Թորոսյանը* նույնպես շեշտում է, որ խորհրդի անդամը պետք է ազատ լինի բոլորովին: Նա նկատում է, որ այստեղ ոչ թե փողը նշանակություն ունի, այլ նրա մի որևէ հիմնարկության մեջ ծառայելը: Նրանք չեն կարող կառավարությունից փող ստանալ և միաժամանակ պետությունը քննադատել: Ինչ վերաբերում է վճարովի հասարակական աշխատանքներին, պատգամավորը դրանից էլ պետք է հրաժարվի՝ խղճի կատարյալ ազատություն պահպանելու համար:

Բուդաղյանի առաջարկը, որ խորհրդի անդամը պետք է ազատ լինի պետական և վճարովի հասարակական պաշտոններից, քվեարկության է դրվում և անցնում է, որը և օրենսգծի 6-րդ կետն է դառնում:

Բուդաղյանը առաջարկում է, որ ճանապարհածախս պատգամավորին տրվի Հայաստանի սահմաններում օրական 20 ռ., իսկ սահմաններից դուրս՝ 30 ռ.: Այդ առաջարկն էլ ընդունվում է ժողովի* կողմից:

Ի վերջո, խորհրդի նախագահությունը զեկուցում է, որ իր ունեցած 20 հազար ռուբլուց 13 հազարը ծախսվել է: Վերանորոգության և այլ կարիքների համար հարկավոր է ևս 50 հազար ռ.: Այդ առաջարկն էլ անցնում է, որից հետո նիստը փակվում է:

«Զանգ», 3 սեպտեմբերի 1918թ.

---

* Այդպես է տեքստում, պետք է լինի՝ խորհրդի: Ծանոթ. կազմ.: